ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ք.Արտաշատ,Օգոստոսի 23, 62
г.Арташат ул.Огостосу 23,62
Ogostosi 23 str/62, Artashat
Հեռ. /Тел./Tel/ /0235/2-23-83
/010/ 25-05-19
Էլ.փոստ / E-artashatmeria@artashat.am

N Ե – 2215

«15» 04 2026թ.

<<ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ ՏԻԿԻՆ ՓԱՌԱՆՁԵՄ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Սուքիասյան

Արտաշատի համայնքապետարանի և <<Շին նախագիծ>> ՍՊԸ -ի միջև 2026 թվականի մարտի 18-ին կնքվել է ԱՄԱՀ-ԲՄԽԾՁԲ-26/09-1 ծածկագրով պայմանագիր:
Կնքված պայմանագրի կատարման ժամկետ է սահմանավել 2026 թվականի մարտի 18-ից հաշված 21 օրացուցային օր՝ 2026 թվականի ապրիլի 07-ը ներառյալ:
Կնքված պայմանագրով սահմանված է՝
1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման, կազման խորհրդատվական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:
1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:
<<Շին նախագիծ>> ՍՊԸ -ին 2026 թվականի ապրիլի 8-ին համայնքի ղեկավարի թիվ Ե – 2006 գրությամբ տեղեկացվել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու մասին և առաջարկվել է 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 13.04.2026թ ներառյալ) կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները, հակառակ դեպքում կկիրառի պայմանագրի 7.11 կետը:
Պատասխանատու ստորաբաժանման 2026 թվականի ապրիլի 14-ի արտահերթ նիստով արձանագրվել է, որ Պատվիրատուի կողմից տրված լրացուցիչ ժամկետում ևս <<Շին նախագիծ>> ՍՊԸ -ն չի կատարում իր կողմից ստանձնած պայմանագրային պարտավորությունները:

Հիմք ընդունելով 2026 թվականի ապրիլի 14-ի պատասխանատու ստորաբաժանման արտահերթ նիստի թիվ 1 որոշումը , պայմանագրի 7.11 կետը Արտաշատի համայնքապետարանը միակողմանի ամբողջությամբ լուծում է «ԱՄԱՀ-ԲՄԽԾՁԲ-26/09-1» ծածկագրով Պայմանագիրը:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ)

պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:
«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:
Հիմք ընդունելով հրավերի 1-ին մասի 10.7 կետը՝ Պատվիրատուի ղեկավարը պայմանագրի ապահովման վճարման պահանջը բանկին, իսկ կանխիկ փողի ձևով ներկայացված ապահովման դեպքում՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, ներկայացնում է գրավոր՝ ապահովման վճարման հիմքը առաջանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ապահովման վճարման պահանջը բանկի կամ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մերժվում է պահանջը կամ դրան կից փաստաթղթերը ոչ ամբողջական ներկայացված լինելու հիմքով, ապա նոր պահանջը պատվիրատուի ղեկավարը գրավոր ներկայացնում է մերժումը ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Հարգանքով

Արտաշատ համայնքի ղեկավար՝ **Կ. Մկրտչյան**

Կատ. Փ. Հակոբյան
Հեռ. 094-71-74-04